# ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Դ. Գ. ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ

## ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության տարիները շրջադարձային եղան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար: Մի կողմից երկխորհրդային բեկումնային զարգացումները եւ կրոնական հարցերում ընձեռված ազատությունը, մյուս կողմից՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունները, հոգեւոր կառույցների շինարարության մեծ ալիք բարձրացրին, որն առավելագույնս դրսեւորվեց շնորհիվ Գարեգին Բ բանիմաց գործունեության. հիմնվեցին նոր եկեղեցիներ, հոգեւոր ու բարեգործական այլ կառույցներ, կրթադաստիարակչական շենքեր եւ այլն:

Գարեգին Բ Հայրապետի շինարարական գործունեության արդյունքը նկատելի ներդրում է ժամանակակից հայկական ճարտարապետության մեջ: Առանց այդ թերի կլիներ հայոց անկախության տարիների ճարտարապետական մշակույթը: Այն կատարվեց ոչ միայն Հայաստանում, այլեւ սփյուռքահայ գաղթօջախներում: Ակնարկվող տարիներին աննախադեպ ընդարձակվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառուցապատումն ու տարածքը, հայրենիքի թեմերում եւ գաղթավայրերում կառուցվեցին բազմաթիվ եկեղեցիներ, որոնց կողքին մեծ թիվ են կազմում նաեւ խորհրդահայ ժառանգության մի շարք կառույցների պահպանությունն ու օգտագործումը բարեսիրական նպատակներով: Ավելին, ակնարկվող շինարարական միջոցառումները մեծ նշանակություն ունեն մեր օրերում անչափ կարեւոր՝ եկեղեցական եւ հոգեւոր կառույցների շինարարական նորմերի կիրառման եւ կատարելագործման համար:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի շինարարական գործունեության շառավիղն ընդգրկում է երեք ուղղություն, որոնց առանցքն է կազմում Մայր Աթոռի տարածքի բարեկարգումն ու կառուցապատումը, երկրորդը՝ հայաստանյան թեմերում եւ երրորդը՝ սփյուռքի թեմերում իրականացված համանման աշխատանքները: Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հայրենական 9 թեմերում հաշվառվում են 130-ից ավելի նորակառույց՝ եկեղեցիներ, հոգեւոր շենքեր եւ նույնքան մեծ ու միջին շինությունների նորոգումներ, ինչպես նաեւ հինգ պասնյակի հասնող աշխարհիկ շենքերի վերակառուցումներ, որոնք պետք է ծառայեն նոր սերնդի դաստիարակման ազգասիրական նպատակներին:

Հայոցնախորդ Վեհափառների օրոք սկսված սփյուռք-հայրենիքհամագործակցությունը հաջողությամբ շարունակվում եւ ընդլայնվում է Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի

զահակալության տարիներին: Բազմակողմանի հարաբերությունների խորքով աննախադեպ բարգավաճում ու շինարարական բարձր տեմպ կա վիրահայոց թեմում: Շինարարական բեղուն գործունեություն է ծավալվել նաև Ռուսաստանի դաշնությունում և ԱՄՆ-ում: Համապատասխան կարելի է արձանագրել, որ այսօր ԱՄՆ-ի Արևելյան և Արևմտյան թեմերում կատարված եկեղեցաշինական գործունեությունը հավակնում է դառնալ հայկական արդի ճարտարապետության առինքնող դրսևորումներից մեկը, որում, բնականաբար, իր անուրանալի դերն ունի Ամենայն Հայոց Հայրապետի կազմակերպչական ավյունը: Նշվածներով հանդերձ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հզորագույն ճարտարապետաշինարարական մտահղացումը եղավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքի և համալիրի ռեգեներացիան ու հարմարեցումը կյանքի արդի պահանջներին, որոնց գաղափարական հենքն այն է, որ անկախություն նվաճած հայրենիքի վերասկզբնավորումը պահանջում է նաև համապատասխան հզոր կրոնական կենտրոն: Հայ ժողովրդի հոգևոր մայրաքաղաքն օրըստօրե դառնում է կրոնական համաշխարհային կարևորագույն ուղղափառ կենտրոններից մեկը:

Մայր Աթոռի տարածքում կատարված նոր շենքերի հավելումը ընթացավ ռացիոնալ մտածողությամբ: Փաստորեն սերտև ուսումնասիրվող նորակառույց եկեղեցիները, հոգևոր, ուսումնական, մշակութային և արտադրական շենքերը միտված ուղղվածություն տվեցին Մայր Աթոռի բովանդակությանը և հետևաբար նրա ապագա գործունեությանը:

1. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորակառույց եկեղեցիները

Նոր եկեղեցիների կառուցումը եկեղեցաշինական տիպերի հետաքրքրություն մտցրեց Մայր Աթոռի կառուցապատման մեջ: Մայր տաճարի հետ երևան եկան՝ բացօթյա Բաց Խորանի, մկրտարանի և ուսումնական եկեղեցու օրինակներ, որոնք ոչ միայն եկեղեցական մասշտաբ ավելացրեցին համալիրին, այլև արդիականության ու նորարարության ոգի մտցրեցին Մայր Աթոռի կազմում:



Բաց Խորանը. Հայաստանում քրիստոնեության պաշտոնական կրոն հռչակման 1700- ամյակին նվիրված ճարտարապետական գլխավոր միջոցառումն է, որ նվիրված է Ս. Տրդատ Գ. արքային: Համակառույցը բարձր գեղարվեստականությամբ մտահղացում է, որ իրագործվեց Գարեգին Բ Կաթողիկոսի հովանավորությամբ: Բաց խորանը որպես Գրիգոր Լուսավորչի դարպասի եւ բացօթյա եկեղեցու համադրություն աննախադեպ կառույց է, որում վարպետորեն մեկնաբանվել է քրիստոնեության մուտքը Հայաստան: Համալիրը տեղադրված է Մայր Տաճարի առանցքով դեպի Արարատյան փողոց՝ Գեւորգյան ճեմարանի հարավային կողմում: Այն դեպի Մայր Տաճար տանող հանդիսավոր փողոցի սկզբում զետեղված տետրապիլոն դարպաս է՝ հարավային կողմում բացօթյա արարողությունների հատկացված խորանի (բեմի) առաջ ծավալվող ուղղանկյուն հրապարակով: Համակառույցը ստեղծագործական բարձր թռիչք ունի, որտեղ հորինվածքի կենտրոնը բացօթյա հարթակն ու հարակից փողոցն են, իսկ հիերարխիան կամ հորինվածքի գլխավոր տարրը միասնաբար խորանն ու դարպասն են: Դրանք միաձույլ են եւ միաժամանակ գործնականորեն անջատ: Ստեղծագործական խումբը՝ ճարտարապետներ Ջիմ Թորոսյանն ու Ռոմեո Ջուլհակյանը, քանդակագործ Երվանդ Քոչարբաշյանը եւ շինարար Գագիկ Գալստյանը մեծ եռանդ են ներդրել համալիրի կայացման գործում, որի բացումը կատարվեց 2001թ. օգոստոսի 2-ին, մեկենասն է նյույորքաբնակ Լուիզ Սիմոն Մանուկյանը :

Ծավալատարածական կառուցվածքով Բաց խորանը ուշ անտիկ ժամանակների մեմորիալի ու վաղ քրիստոնեական խորանի կամ օրատորիայի վերացականացված մեկնաբանություն է, որ հավերժացնում է քրիստոնեության մուտքն ու հաստատումը Հայաստան դեռեւս Դ. դարի առաջին տարիներին: Փաստորեն, տետրապիլոնը իր պլաստիկայով չորս օրդերների իմպոստային մասում ձեւագոյացնում է շրջադարձ դեպի եկեղեցու գմբեթատակ կամարները, որոնք առաստաղային մասում վերածվում են դեպի երկինքն ու երկնայինը ուղղված քառակուսի բացվածքի: Տետրապիլոնի սյուները 14 մ առանցքային թռիչքով հուժկու հենարաններ են, դրանցից երկու արեւմտյանները օրդերի վզիկի մասում մեկնաբանվել են որպես աստիճանաձեւ պտտվող պրոցեսիա, իսկ խոյակի հատվածում կրում են Հայաստանում քրիստոնեությունը տարածող Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների հարթաքանդակները: Տետրապիլոնի արեւելյան հենարանները խոյակի մասում պարզակաձեւ առաջակարկառվելով գոյացնում են վերեւում խաչով պսակված մուտքը, որտեղ խաչի երկու կողմերում բացարձակ մեծությամբ ընդգծված պարզակների վրա Տրդատ Գ. թագավորի եւ Լուսավորչի հարթաքանդակներն են:

Եթե տետրապիլոնի ծավալատարածական լուծումներում, քանդակային կատարումներում եւ տարբեր մասերում եղած վիմական մակագրություններով հաստատագրված է քրիստոնեության մուտքը Հայաստան, ապա Բաց խորանի ենթամասում եղած հաջորդական կիսաշրջաններով մեկնաբանվում է քրիստոնեության զարգացումը հիմքից դեպի կամարող բարձունքը: Խորանը լուծված է միանգամայն ակուստիկական առանձնահատկություններով, այն հատակագծում դեպի հետնապատը նեղացող սեղանաձեւ տարածություն է, որ առաջնամասում 14 մ է, իսկ հետնամասում 4 մ: 2.3 մ լայնությամբ հետնապատը իր առանցքային ձգված լուսամուտով խորհրդանշում է Քրիստոսի լուսավոր էությունը, մինչդեռ նրա երկու կողմերում եղած՝ ստորին մասում խորշավոր եւ վերեւում

վեցական կիսակամարներով ցլապտումները խորհրդանշում են առաքյալներին: Խորանի ընդհանուր խորությունը կազմում է 9 մ: Նկարագրված ծավալատարածական լուծումը փակ և բաց տարածությունների համադրությամբ ստեղծված միաշունչ դիսիմետրիա է, որտեղ պերտակիլոնը միջանցիկ տարածություն է, իսկ խորանային հատվածը՝ պատվանդանով բեմ: Երկու ծավալների միջև ստեղծված ճակատային առանցքում խտացված է համակառույցի մտահղացումը, որ կամարի և լուսավոր խաչի համադրությամբ կազմված ինտերվալ է: Այս առանցքով զարգանում է հորինվածքի հատակագծային տարածական կառուցվածքը, որտեղ տվյալ առանցքից դեպի հյուսիս Ս. Գրիգոր Լուսավորչի դարպասից սկիզբ առնող պողոտան է, որ հեռանկարի պատկերում ունենալով Մայր Տաճարը՝ անընդհատ երկարում է դեպի արևմուտք: Նույն առանցքից դեպի հարավ շրջապատից մեկ աստիճանի չափով բարձրացված խորանի առաջ տարածվող բացօթյա հրապարակն է: Այն կազմված է երկու մասերից՝ խորանի հարավ-արևմտյան անկյունում եղած 8 մ կողմով քառակուսի հարթակից, որ կարող է ծառայել երգչախմբի կամ պատվավոր հյուրերի համար, ինչպես նաև 15x65 մ հիմնական ունկնդիրների հարթակից: Հետնաբեմի հատվածում՝ վեմքարի կամ սեղանի ետևում եղած աստիճանները 2.7 մ բարձրությամբ իջնելով՝ խորանի տակ ստեղծում են օժանդակ կրիպտորիան: Երկու ենթակառույցների միջև եղած ճակատային առանցքի ընդգծումը ինչպես արևմտյան ճակատում, այնպես էլ արևելյանում կատարվել է միանգամայն արտահայտիչ ծավալներով, որոնք միասնաբար ստեղծում են կանոնավոր երկրաչափական ուրվագիծ և տարածականությամբ շնչող ծավալային պլաստիկա: Առանձնապես ուշագրավ է պերտակիլոնի և խորանի իրարից զանազանվող լույս-ստվերային արտահայտչականությունը, որ ընտրված ծավալատարածական ձևերի սկզբունքային տարբերության արդյունքն է: Որքան էլ երկու ենթածավալներում ֆակտուրալ կամ կապտավուն բազալտի նյութն ու գույնը նույնական է, այնուամենայնիվ նրանք հնչում են իրար լրացնող կոնտրաստային միասնականությամբ: Նույնը պետք է ասել ակնարկվող ծավալների մասնահատման օրինաչափությունների կապակցությամբ: Փաստորեն պերտակիլոնը մակերևութային տարրերի մասնահատման սկզբունքով է, իսկ խորանը ուղղահայաց կիսակամարների պրոգրեսիվ շարքով: Համալիրը 14 մ ընդհանուր բարձրությամբ միջավայրում նայվում է միանգամայն մոնումենտալ և ինքնտիպ, որ Մայր Աթոռի տոհմիկ ճարտարապետության արդիականության նոր երանգ ավելացրեց:

Ս. Վարդան և Ս. Հովհաննես Մկրտիչ մկրտարանը. Անվանվում է երկու անուններով որովհետև բովանդակում է երկու մկրտարաններ, մանուկներինը՝ Ս. Հովհաննես Մկրտիչ, իսկ մեծահասակներինը՝ Ս. Վարդան Զորավար: Համակառույցը տեղադրված է Մայր Տաճարի բակում, հյուսիսային կողմում եղած խաչքարերի ցուցադրման խուլ կամարաշարի կենտրոնական մասերում՝ Հին մատենադարանից արևմուտք: Շենքի ճարտարապետներն են Ջ. Թորոսյանը և Ռ. Ջուլհակյանը, շինարարական իրականացումը՝ Գ. Գալստյանի: Մկրտարանի բացումը կատարվեց՝ 2005 թ., մեկենասն է լոնդոնաբնակ՝ Արմեն Սարգսյանը:

Համակառույցը կազմված է մուտքային նարտեքսից, մեծ և փոքր մկրտարաններից, ինչպես նաև մեծ մկրտարանի նախամուտքի երկու կողմերում եղած օժանդակ սենյակներից: Այնպես, որ նախասրահը տեղաբաշխված է նշված խաչքարային կամարաշարի առաջնամասում, օժանդակ սենյակները կամարաշարի անմիջական շարունակությունն

են կազմում, մինչդեռ երկու մկրտարանները գտնվում են կամարաշարի եփին մասում տարածվող այգու տարածքում: Առանձին կանգնած մկտարանի մտահղացումը եզակի երեւույթ է հայկական ճարտարապետության մեջ, այն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի նախաձեռնած եւ վերեւում նշված հեղինակային խմբի իրականացրած նորարարություննն է, որ ոչ միայն նոր շինություն է, այլեւ հայկական իրականության մեջ ճարտարապետական նոր փիպ եւ հայկական պաշտամունքային ճարտարապետության զարգացման նոր փուլի վառ վկայություն[1]: Համակառույցի հորինվածքի կենտրոնն ու գլխավոր տարրը Ս. Վարդան Մկրտարանն ու իր գմբեթն է: Առանցքային լուծումը միահյուսում է երկու դիտողականություն, մեկը` Երեմյան խցերի եւ տպարանի միջեւ անցնող փողոցի ուղղությամբ է, որ կազմակերպվել է երկու մկրտարանների կանթեղների տարածական դասավորությամբ, իսկ մյուսը`Մայր Տաճարի դարպասի եւ հյուսիսային դռան ուղղությամբ է, որ կազմակերպվել է նարտեքսիին հաջորդող նախասրահի եւ Ս. Վարդան մկրտարանի կանթեղների դասավորությամբ: Երկու առանցքներն էլ Մայր Տաճարի բակին դրամատիզմ են հաղորդում: Առհասարակ մկրտարանի ծավալատարածական լուծումը գտնված է վարպետությամբ, այն ենթարկվելով շրջակա կառուցապատմանը, միաժամանակ ենթակա է Մայր Տաճարի մասշտաբին, բայց ձորմայով միանգամայն մնալով ուշագրավ:

Ս. Հովհաննես Մկրտիչ եւ Ս. Վարդան մկրտարանի նարտեքսը ինքնատիպ հորինվածք է, այն ասփիճանական անցում է բակից դեպի շենքի ներսույթը: Ճակատի երկու կամարների միջին հատվածում փորագրված խաչերի կոմպոզիցիան մասշտաբով կրկնում է իրենից առաջ գտնվող 1915 թ. Եղեռնի հուշակոթողի խաչերի չափերը: Մկրտարանի մուտքը բետոնյա ուղղանկյուն շրջանակին արտագծված կամար է, որ փեղկերի մասում խաչաձեւ հարդարանք ունի: Այն հստակորեն ընթերցվում է նարտեքսի ապակյա ծածկից մաղվող լույսի օգնությամբ, ինչը առիթ է ընձայում հստակությամբ կարդալու նաեւ դեպի աջ գտնվող եւ Գարեգին Բ-ի խոսքերով փորագրված նվիրական վիմագրական հայատառ արձանագրությունը:

Ս. Վարդան կամ մեծ մկրտարանը ռոմբաձեւ դասավորությամբ շարունակում է նարտեքսի երկու կամարների եւ մուտքի առանցքը: Այն 13.6 մ x 13.6 մ չափերով քառակուսի է, որ մուտքային հատվածում ունի ուղղանկյուն նախասրահ: Նախամուտքի կենտրոնում մկրտարանի հարավային անկյան սյունն է: Նրանից մինչեւ նարտեքսը նախասրահի շարունակությունն է, որ միացնում է նաեւ օժանդակ սենյակներով կազմված թեւերը: Ս. Վարդանի հորինվածքը Սանահինի վանքի գրատան ստեղծագործաբար զուգահեռն է, որ սերում է ժողովրդական բնակելի տան ակունքներից: Դահլիճի ծավալատարածական կերտվածքը ուղղանկյուն հատակագծից անցնում է դեպի գմբեթային ութանիստը, որ գագաթում կրում է ութասյուն կանթեղը: Կանթեղի լույսի ներքո` անմիջապես ուղղանկյուն դահլիճի կենտրոնում մկրտության խաչաձեւ ավազանն է: Տարբեր կողմերից ճառագայթող լուսային խրցերը խանդաղատանք են հաղորդում սրահի մթնոլորտին: Սրահի քառակուսու անկյունների վրա 4 մ բարձրությամբ, 4.25 մ շառավղով բոլորվող տրոմպները 2.25 մ խորություն ունեն, որոնք միասնաբար ստեղծում են 8.5 մ կողմով ուղղանկյան կոլիցիա:

1 Տե՛ս **Անուշ Տեր-Մինասյան**, Մկրտարանի շենքը` որպես հայկական պաշտամունքային ճարտարապետության նոր տիպ. «Ճարտարապետություն Շինարարություն», 2010, հունվար, էջ 20:

Այստեղից վերև 1.3 մ բարձրությամբ պրիզմաձև թմբուկն է և 3.4 մ բարձրությամբ բրգաձև երդիկը: Կանթեղի բացվածքը 2.5 մ է, իսկ բարձրությունը 4.3 մ: Գմբեթի վեղարի մակերևույթներով և աշխարհի կողմերի նկատմամբ ուղղված նիստերի առանցքներով տեղաբաշխվել են 4 մեծ խաչաձև լուսամուտներ, որոնք իրենց թեք տեղադրությամբ ներսույթում երկնայինի խորհրդավորություն են ստեղծում: Դահլիճի արևելյան խորշում խորանն է, իսկ արևմտյան կողմում մոմավառության հարթակներն են, որոնց միջով անցում է կատարվում դեպի Հովհաննես Մրկտչի մրկտարանը:

Ս. Հովհաննես Մկրտչի կես՝ փոքր մկրտարանը, հորինվածքով կրկնում է նախորդին, լինելով նրա քառորդ տարրողությամբ: Այն տեղադրված է Ս. Վարդան մկրտարանի արևմտյան կողմում՝ 45° թեքությամբ: Դահլիճը 6.4 x 6.4 մ չափերի ուղղանկյունի է, որին 45° տակ ներգծված կոլիցիոն քառակուսու կողը 5.0 մ է: Տրոմպների շառավիղը 3.7 մ է, իսկ խորությունը 2.5 մ: Մկրտարանի վեղարը ուղղանկյուն կանոնավոր բուրգ է՝ կենտրոնում համապատասխան քառակուսի բացվածք ունեցող և 4.0 մ բարձրությամբ կանթեղով: Մկրտման ավազանը նույնպես տեղադրված է դահլիճի կենտրոնում:

Մկրտարանի ծավալների տարածական դասավորությունը եռանկյունաձև ուրվագծով է, որ նրան առանձնացնում է Մայր Տաճարի բակի մյուս շենքերից: Սակայն բաղկացուցիչ մակերևույթների համաչափական մշակմամբ, շինանյութով և տեքստուրալ լուծումներով միանգամայն նույնական է շրջապատի հետ: Նույնը պետք է ասել լույս ու ստվերային, մասշտաբային և գունային լուծումների մասին: Փաստորեն համակառույցի յուրահատկությունը ծավալային մասնահատումներն են, որոնք նման լինելով Մայր Տաճարի բազմագմբեթ ուրվագծին՝ փոքր ու մեծ ծավալների տարածական կրկնություն են ստեղծում : Այս բոլորը երաժշտականություն են հաղորդում մկրտարանի հորինվածքին, որում օգտագործված վիմագրական և մի քանի զարդամոտիվները միանգամայն պրակտիկ նշանակություն ունեն: Ս. Վարդան և Ս. Հովհաննես Մկրտիչ մկրտարանը ոճով խորհրդանշանային ու արտահայտչապաշտ սկզբունքները միահյուսող արդի ռացիոնալիզմ է:



Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին. Ս. Հրեշտակապետաց եկեղեցու հիմնարկեքը կատարվեց 2007 թվականին, շենքի կառուցման մեկենասն է՝ երևանաբնակ Գագիկ Գալստյանը: Այն կառուցվեց Գևորգյան ճեմարանի տարածքում՝ ամբողջացնելով ուսումնական համալիրը: Տվյալ քայլով Գարեգին Բ Հայրապետը Գևորգյան ճեմարանը վերածեց համալսարանական հաստատության՝ շեշտված կերպով Ս. Էջմիածինը դարձնելով նաև կրթական կենտրոն: Մայր Աթոռի տարածքում ներկայում կառուցված և կառուցվող մի շարք ուսումնական շենքերը՝ Գարեգին Ա-ի կրթական համալիրը, հայորդյաց տունը, Էօրնեկյան դպրոցը ընդգծում են տվյալ գաղափարը, որի կարևոր բաղկացուցիչներից է Հրեշտակապետաց եկեղեցին: Այն յուրահատուկ տեսակի դամբարան եկեղեցի է, որտեղ, անցումը դեպի մեմորիալ մասը կատարվում է յոթ խաչերի ուղեկցությամբ ոլորապտույտ իջնող աստիճանների միջոցով: Բնականաբար սա միջինացնում է կրիպտորիա ունեցող եկեղեցու տիպը երկհարկ դամբարան եկեղեցիների հետ: Վերջիններում տապանատան և եկեղեցու մուտքերը առանձնացված են՝ինչպես օրինակ՝Կապուտանի Ս. Մինասն է, Եղվարդի Ս. Աստվածածինը և Նորավանքի Բուրթելաշեն Ս. Աստվածածինը: Մինչդեռ կրիպտավոր եկեղեցիների տապանատան մուտքերը ավանդատներից են, ինչպես որ հանդիպում է Ս. Գայիանեի, Ս. Հռիփսիմեի, Օշականի, Շուշիի Մայր եկեղեցու և այլ օրինակներով: Տվյալ մտահղացումը կարելի է համեմատել նաև արդի ճարտարապետության օրինակների հետ, ինչպես, օրինակ, Ռ. Իսրայելյանի նախագծած Երևանի Հաղթանակի հուշարձանն է:

Ս. Հրեշտակապետաց եկեղեցին տեղադրվել է Մայր Աթոռի Աթարբեկյան փողոցին հարակից Այգու առանցքով և Գևորգյան ճեմարանի բակի հյուսիս արևմտյան կողմում, այնպես, որ այն բոլոր կողմերից լրացնում է Էջմիածնի համալիրի ուրվագիծը: Շենքի Ճարտարապետն է Ջ. Թորոսյանը, ճարտարագետը՝ Հովհաննես Մեյրոյանը, իսկ քանդակագործը՝ Երվանդ Քոչարաշյանը: Ինչպես նշվում է նախագծի բացատրագրում՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հանձնարարվել էր ստեղծել և կառուցել մի եկեղեցի ի նշանավորումն հայ եկեղեցական շինարարության վերածննդի: Ընդամենը 25 մ տրամագծով այս կլոր եկեղեցին կառուցվել է որպես կապող օղակ հոգևոր մայրաքաղաքի Կոմիտասի հրապարակի և Մայր Աթոռի համալիրի միջև: Եկեղեցին ստեղծագործաբար շարունակում է հայ ճարտարապետության բազմախորան եկեղեցիների հորինվածքը, ինչպես՝Խծկոնքի համալիրի հուշարձաններն են, Անիի Ս. Փրկիչ եկեղեցին և այլն:

Ս. Հրեշտակապետաց եկեղեցին կենտրոնագմբեթ՝ հատակագծում շրջանաձև հորինվածք է: Այն մինչև 12.5 մ նիշը կազմված է 3 մ մուտքային բացվածքով ելուստավոր 15 նիստերից և 6 մ լայնությամբ արևելյան ուղղանկյուն խորանից: Եկեղեցու Մուտքերը երկուսն են՝գլխավորը գտնվում է արևմտյան, իսկ մյուսը արևելյան կողմում:

Աղոթասրահի որմնախորշերի կողերից վերև տեղադրված սկվինչները կազմում են 1.5 մ բարձրությամբ գմբեթատակ օղակը: Թմբուկը լուծված է 3.7 մ բարձրություն ունեցող հաջորդական 30 խաչերի շարքից, որ խորանի վերևում շարունակվում է երեք խաչի լայնություն ունեցող ուղղանկյուն բացվածքով: Այստեղ, առանցքային կարգով կախված 4 զանգակները՝ բացվածքը բաժանում են երեք մասի: Այս եզակի ստեղծագործական քանդակազարդ լուծումը խորհրդանշում է Քրիստոսի 33-ամյա աշխարհային կյանքը՝ վերջին երեք տարիների ընդգծումով, որից հետո նա համբարձվեց երկինք: Այս

կրամաբանությամբ է փաստորեն Հրեշտակապետաց եկեղեցու կրիպտոիայից և աղոթասրահից կազմված կառուցվածքը: Եկեղեցու գմբեթը ծավալատարածական ձևերով արևի պատկերագրությունն է: Այն կենտրոնում ընդգրկում է 7.30 մ շառավղով իջնող չափերով վեղարի աֆերան, որի շուրջ ճառագայթաձև դասավորված են լույսի խորքով նկարվող խաչերը: Թմբուկը 5.2 մ բարձրությամբ է, իսկ վեղարի բարձրությունը մինչև խաչի խնձորակը կազմում է 6 մ: Վեղարը ծալքավոր է, կազմված 1.4 մ բարձրությամբ 16 ճակտոններից: Թմբուկ-վեղար համաչափությունը ոսկեհատման հարաբերության սահմաններում է:

Ս. Հրեշտակապետաց եկեղեցու աղոթասրահը մինիմալիստական կերտվածք ունի: Եկեղեցու ներքին մակերևույթը միասնական է, որի վրա վերևից ներքև հաջորդաբար զետեղված են՝ թմբուկի խաչերը, որմնախորշերի առանցքով կախված կանթեղները, վեղարի տակ քանդակված որմնագիր արձանագրությունը՝ «Դու ես ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք մեր», ինքնատիպ լուծումով խորանն ու գավազանատունները, հյուսիսային կողմում առանձին կանգնած ավանդական մկրտման ավազանը:

Խորանը յուրահատուկ ժառանգորդութական ունի: Այն հունական անտիկ տաճարների քրիստոնեական տարրերով ստեղծագործաբար կատարված նոր մեկնաբանություն է: 60 սմ բարձրությամբ բեմը դեպի դահլիճն առաջացած ուղղանկյուն հարթակ է, նրա առաջնաբեմի երկու անկյուններում յուրահատուկ մաշտաբով մեկնաբանված գավազանատներն են: Հետնաբեմը հատակագծում ուղղանկյուն և վերևից կամարակապ խորանային խորշ է, որի առանցքով տեղադրված լուսային խաչը երկու կողմերից նվազող պրոգրեսիայով արծվաթևի նկարվածքով սահում է դեպի որմնախորշի կողերը և կազմում եռանկյունաձև հետնապատը: Այստեղ տեղադրված մեծ ու փոքր խաչքարերի ու աղավնու հարթաքանդակներով կոմպոզիցիան նստում է խորանի առաջ տեղադրված լայնակի համաչափությամբ վեմ քարի վրա: Բնական լույսի ընտրված ուժգնությունը մեղմ է ու մաղվող, որ ներսույթին հաղորդում է աղերսի ու խանդաղատանքի մթնոլորտ:

Խորանի հյուսիսային կողմի կամարակապ և յոթ խաչաքանդակ վահանների շարքը մատնանշում է կողային պտուտակաձև աստիճանները, որոնք ոլորապտույտ տանում են դեպի բարերարների մեմորիալ սրահը: Սա շուրջանակի 8 սյուներով իրականացված՝ պարագծային միջանցքով և կենտրոնական սրահով համադրված տարածություն է: Սրահի խորնային մասի հետնապատին մի մեծ խաչ կիզակետում վերցնում է ողջ ինտերիերը: Այստեղ առաստաղի, հատակի հարթությունների վրա ամենուրեք խաչերի հարթաքանդակներ են, իսկ արևմտյան կողմում տեղադրված է հավերժության խորհրդանիշը պատկերող շրջանաձև մեծ բարձրաքանդակ:

Տպավորիչ է և խորհրդավոր Ս. Հրեշտակահետաց եկեղեցու ներկայացված ներսույթը: Նույնքան տպավորիչ է նրա արտաքին լուծումները: Տաճարի ծավալատարածական լուծումը կանոնավոր եկրաչափական ձև ունի: Աղոթասրահն ու գմբեթը ավանդական արմատ 2-ի հարաբերությամբ են: Դրանք բաժանող կամարակապը հարավարևելյան կողմից վերևից եզերված է վիմագիր արձանագրությամբ՝ «Եւ նստաւ տապանն եօթներորդում ամսեանն ի քսան և եօթն ամսոյն ի լերինս Արարատայ և օրհնեաց Աստուած զՆոյ և զորդիս նորա և ասէ ցնոսա՝ աճեցէք և բազմացարուք և լցէք զերկիր և տիրեցէք դմա»: Թմբուկի

լուսամուտների խաչերը վերևից նույնպես կամարակապ են, զագաթային մասում ունենալով առանցքային վարդյակներ: Առհասարակ, եկեղեցու վեհությունն ընդգծելու համար նրա ենթածավալների համամասնությունը դեպի վերև նվազողական օրինաչափությամբ է: Չորս ճակատների առանցքներն ու ճանաչողական փարրերը ընդգծվել են հարթաքանդակային լուծումներով, ինչպիսիք են դեպի քաղաքային հրապարակի կողմն ուղղված ճակատի քանդակը, որ պատկերում է Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Էջմիածնի Տաճարի արարումն ու հիշատակագրությունը՝ «ԷջՄիածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա ի վերայ աջոյն եւ սրբոյ Էջմիածնի ամենայն ազգս հայոց կապեալ կայ»: Արևելյան ճակատի առանցքային ընդգծումը կատարվել է խորանի խաչաձև լուսամուտով, հարավային ճակատում երկրորդական մուտքով և արևային ժամացույցով կազմված կոմպոզիցիան է, իսկ արևմտյան կողմում եկեղեցու շքամուտքը իր քանդակազարդ բարավորով:

2. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նորակառույց հոգևոր շենքերը.

Հոգևոր կառույցները լինելով աշխարհիկ բնույթի՝ծառայում են հոգևոր դասի կարիքների համար, այդ պատճառով դրանք ուսումնասիրվում են եկեղեցիներից առանձնացված խմբով: Տվյալ շենքերի հետ ուսումնասիրությունում ընգրկվել են նաև հասարակական սպասարկման այլ կառույցներ ևս, որոնք կներկայացվեն նույնպես առանձնացված խմբով:

Ս. Գևորգ Հոգևոր ճեմարանի համալսարանական հաստատության վերածումն ու նրա նորակառույցները. Գևորգյան ճեմարանը Մայր Աթոռի սկզբունքային կառույցներից է: Այն խորհրդանշում է ազգային կրթության մեջ Ս. Էջմիածնի ունեցած առաջնորդող դերը: Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Կաթողիկոսի ջանքերով կառուցված ԺԹ դարի շենքը, խորհրդային տարիներին ծառայել է որպես Վաղարշապատի թիվ 1 միջնակարգ դպրոց: Երկրորդ աշխարհամարտի տարիներին այն շահագործվել է որպես զինվորական հիվանդանոց: Պատերազմից հետո նորից ծառայելով դպրոց՝ վերանվանվել է Անաստաս Միկոյանի անվան: Վազգեն Ա Կաթողիկոսի պահանջով 1959 թ. վերդարձվելով Մայր Աթոռին, մինչև 1994 թ. եղել է թանգարան: Գարեգին Ա Հայրապետի ժամանակ 1996-97 թթ. նորակառույց ժառանգավորաց հանրակացարանի հետ վերաբացվեց որպես Գևորգյան հոգևոր ճեմարան և Հին Վեհարանից տեղափոխվեց իր նախկին վայրը: Գարեգին Բ Ամենայն Կաթողիկոսի նախաձեռնությամբ 2003 թ. ստանալով բարձրագույն հաստատության կարգավիճակ՝ վերանվանվեց Գևորգյան հոգևոր ճեմարան (աստվածաբանական համալսարան): Կատարվեց շենքի վերանորոգությունը և հաջորդաբար ընդարձակումը, որպես Մայր Աթոռի կառուցապատման հյուսիսարևելյան կողմը ավարտող տարածք: Ընդհանուր համալիրը վերածվեց և Գևորգյան ճեմարանի շենքի և նորակառույց Ս. Հրեշտակապետաց եկեղեցու միջև տարածվող բականման տարածության, որտեղ Արարատյան փողոցին զուգահեռ տեղադրվեց մի նոր մասնաշենք և բռնադատված հոգևորականներին նվիրված հուշակոթող: Համալիրը հարավային կողմում հարում է Լուսավորչի դարպասի ու Բաց Խորանի առաջ տարածվող հրապարակին, իսկ արևմտյան կողմում՝ գոյություն ունեցող այգուն և ժառանգավորաց հանրակացարանին: Գևորգյան ճեմարանի ներկայացվող համալիրը ունի բարձր գեղարվեստականություն և ստեղծագործական բարձր թռիչք:

ա. Գևորգյան Ճեմարանի նորոգությունը. Վերևում նկարագրված համալիրի կազմում Գևորգյան ճեմարանի վերենորգությունը հիմնականում կատարվեց ներքին

տարածությունների մաաշտաբով: Շենքի արտաքին ծավալը, որպես հուշարձան թողնվեց նույնությամբ: Գևորգյան ճեմարանի շենքը ի սկզբանե իրականացվել էր դասական սխեմայով: 59x17 մ ուղղանկյուն երկհարկ կառույցը կենտրոնական մասում լուծված է 15 մ տրամագծի ութանիստ գմբեթով: Երկայնական առանցքով անցնող 4 մ լայնությամբ միջանցքը շենքը բաժանում է 7.2 մ խորությամբ հարավային և հյուսիսային սենյակաշարքերի: Երկար միջանցքի կողային հատվածներում 9x6 մ մուտքային հանգույցներ են: Կենտրոնական հատվածը հարավային մասում գմբեթավոր է, իսկ հյուսիսայինում ավարտվում է լանջավոր տանիքով: Վերջինները առաջին հարկում միասնաբար միջանցիկ են, ընդ որում գմբեթատակ հատվածում ներթապահ սենյակներն են, իսկ հյուսիսային կողմում եռամարշ հանդիսավոր աստիճանավանդակը, որի տակով կարելի է անցում կատարել դեպի նորաստեղծ ուսումնական բակը: Բացի գլխավոր աստիճանավանդակը` շենքի արևելյան և արևմտյան ծայրամասերում կան երկրորդական աստիճանավանդակներ և սանհանգույցներ: Մնացյալ տարածքները լսարաններ և վարչական սենյակներ են: Երկրորդ հարկում գմբեթավոր հատվածը ութանիստ օրատորիա է, որ լուծված է ակուստիկ նկատառումներով ու գմբեթի գագաթում լուծված է կանթեղով: Երկրորդ հարկի դահլիճի առաջնամասում, տվյալ նորոգության ժամանակ նորովի կառուցված փայտաշեն աստիճանները սիմետրիկ դասավորությամբ տանում են դեպի ընթերցումների ամբիոն ծառայող պատշգամբները: Մնացյալ մասերում նույնպես ուսումնական լսարաններն են: Շենքի վերանորոգությունը կատարվել է ուսումնական միջավայրին հարիր լուծումներով: Ողջ հատակները սպիտակամոխրագույն բծավոր մարմարից են, իսկ սենյակները իրականացվել են բաց ծիրանագույն մանրահատակից: Գարեգին Բ Վեհափառի նախաձեռնությամբ կատարված 2003 թ. բարենորոգության մեկենասն են` Գևորգ և Սիրվարդ Հովնանյանները:

Գևորգյան ճեմարանի ճակատները հանդիսավոր են, ԺԹ դարի ուսումնական հաստատություններին բնորոշ նոր դասականության լուծումներով: Լուսամուտների դասավորությունը մետրական է, որոնց քայլն ու լայնությունը օգտագործվել է նոր կառուցվող դահլիճային մասնաշենքի ճակատային լուծումներում: Բակի կողմից Գևորգյան ճեմարանի մուտքային մասը լուծված է որպես չորս սյունանի պորտիկ, որի սիմետրիայի առանցքով, ատտիկայի տակին ունի բարոկ շրջանակով երիզված հիմնադրության կապակցությամբ կատարված վիմական արձանագրություն:

բ. Հանդիսությունների և մարզական դահլիճների մասնաշենքը. Գտնվում է Գևորգյան ճեմարանի հյուսիսարևելյան կողմում, ուսումնական բակի Արարատյան փողոցին հարող մասում: Շենքը հարավային կողմից անցումներով կապված է ճեմարանի արևելյան աստիճանավանդակի հետ, որի հարևանությամբ նոր շենքում տեղադրված է զգեստափոխման հարմարություններով սենյակը: Շենքի ճարտարապետն է Ջ. Թորոսյանը: Շենքը երկհարկ է, առաջին հարկը 3 մ բարձրությամբ նկուղային է, իսկ երկրորդ հարկի հատակը գտնվում է 3.5 մ նիշի վրա: Շենքի ընդհանուր բարձրությունը 10.5 մ է: հարմարվելու համար անկյունի տակ ընթացող Արարատյան փողոցի թեքությանը, հանդիսությունների դահլիճը մտահղացվել է որպես երկու` փոքր և մեծ եռանկյունիների համադրություն: Հարավային եռանկյունին եռահարկ է, որ ունի անցումային նշանակություն: Ընդորում 3.5 մ նիշի վրա 300 տեղանոց դիտադահլիճի անցումն է, զրոյական նիշի մակարդակում

դեպի մարզադահլիճի դիտահարթակը տանող անցումն է, իսկ 3 մ նիշի մակարդակով անցում է կատարվում դեպի մարզադահլիճը: Հարթակների նույն օրինաչափությամբ է հաջորդ եռանկյան հարավային հատվածը, որ գործառնական առումով աստիճանների համակարգի ու դեպի դահլիճը տանող նախասրահների համադրություն է: Հյուսիսային եռանկյունին 45 մ հիմքով եւ 17 մ բարձրությամբ տարածք է, որ հյուսիսային կողմում ընդամենը 3.7 մ երկարություն ունի եւ ծառայում է որպես համակառույցի երկրորդ մուտք իր փոքր նախասրահով եւ աստիճանավանդակով: Դիտադահլիճի առաստաղը 3.8 մ քայլով կողավոր սալեր են, բեմական մասի հայելային հարթության վերին գոտին լուծվել է 1 մ բարձրությամբ ֆերմայով: Ինչպես ընկալվում է՝ ճարտարապետին հաջողվել է բարդ տարածքի վրա ստեղծել գեղարվեստական վարպետ լուծում: Նույնքան վարպետ են դահլիճային մասնաշենքի ճակատային լուծումները: Այն արեւմտյան կողմում լուծվել է 12 ձգված համաչափությամբ երկհարկ կամարակապ լուսամուտներով: Այն հարավային կողմում ավարտվում է կամարակապ մուտքով, որից վերեւ տեղադրված է քանդակազարդ լուսամուտային բացվածք: Աներկբայելի է, որ մասնաշենքի հորինվածքի կենտրոնը նախասրահային մասն է, հետեւաբար եւ տվյալ ճակտի համար նույն դերն ունի մուտքի կամարը: Հետաքրքիր հորինվածքային անցում է կատարվել դիտադահլիճների մետրական կամարաշարից դեպի համալիրի հյուսիսային վերջում տեղադրված կոթողը, որ իր ենթատեքստում կրկնում է մուտքի կամարի կիսաշրջան համաչափությունը: Ներկայացված ճակատը՝ ուրվագծով, կամարների պլաստիկայով եւ լույս ու ստվերով վարպետորեն գտնված խորք է Ս. Հրեշտակապետաց եկեղեցու գլանաձեւ ծավալի համար:

Անդրադառնալով դիտադահլիճային մասնաշենքի արեւելյան ճակատին, այն հյուսիսային ծայրում շրջադարձային կարգով ներառում է հուշակոթողի 4-3-2 համադրությամբ հորինված թափանցիկ հուշակոթողը, որից հետո դեպի հարավ ճակատը երկխոսություն է ստեղծում Արարատյան փողոցի կառուցապատման հետ: Ճակատը հորիզոնական ընդգծումներով խուլ պատ է, որի վրա մինիմալիստական սկզբունքով նկարված են առաջին հարկի քառակուսի լուսամուտների մետրիկ շարքը եւ ոսկեհատման հարաբերությամբ տեղաբաշխված առանցքով բարձրաքանդակային ձեւավորումը:

գ. Բռնադատված հոգեւորականների հուշակոթողը. Քարե պատի հարթության թեմատիկ մշակման ստեղծագործական երկունք է: Այն քանդակի եւ ճարտարապետության սինթեզի մորֆոլոգիական մտածողության վարպետ դրսեւորում է: Հուշակոթողը դահլիճների շենքի որմնախորշերի շարքի հետ կապվելով արտակենտրոն տրոմպի միջոցով, 10 մ երկարություն ունեցող հորիզոնական մասնահատումներով սահում է դեպի քաղաքային հրապարակի կողմը: Այն հրապարակին հայեցող մասում եռաստիճան օրինաչափությամբ է: Աստիճաններից յուրաքանչյուրը 3.5 մ բարձրությամբ է եւ ամեն մի աստիճանի վրա կրում է մեկական 3 մետրանոց խաչքար: Ստալինյան ռեժիմին զոհ դարձած բռնադատված հոգեւորականների հուշակոթողը ինքնին երեք մակարդակների վրա լուծված 2.2 մ շառավղով կամարների կոմպոզիցիոն համանվագ է: Առաջին հարկում կամարները չորսն են, երկրորդ հարկում երեքը, իսկ երրորդում երկու: Կամարները վերին երկու հարկերում թափանցիկ են եւ կենտրոնական առանցքի նկատմամբ սիմետրիկ դասավորությամբ: Ընդ որում ամեն մի կամար իր կենտրոնով անցնող հորիզոնական տրամագծի կենտրոնում ունի պատվանդան,

որի վրա դասավորված են տարբեր չափերի խաչքարեր: Առաջին հարկի կամարները երկրաչափական կվադրատուրային լուծում ունեն, որտեղ կենտրոնական քառակուսիների վրա նախատեսվում են քանդակազարդ արձանագրություններ և այլն: Պետք է նկատել, որ ստալինյան բռնակարգի զոհերին նվիրված նման բազմաբովանդակ ստեղծագործություն դեռևս չի իրականացվել:

Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի կրթական կենտրոնը. Շինարարությունը սկսեց 2011թ. հունիսին: ճարտարապետն է Ա. Նազարեթյանը, շենքի կառուցման մեկենասը՝ ամերիկաբնակ Հայկ Թ-իթիզյանը: Համակառույցը գտնվում է նախկին միահարկ հիվանդանոցի տեղում, Մայր Աթոռի տնտեսական համակառույցի արևմտյան կողմում, միաբանական կացարաններից հարավ:

Կրթական կենտրոնը երկհարկ բակավոր հորինվածք է, որի հյուսիսային կողմը ԺԹ-դարում կառուցված և 1962 թ. վերանորոգված միահարկ հիվանդանոցային շենքն է: Այն ռելիեֆով բակից բարձր է 2.7 մ չափով: Կառույցը ընդհանուր չափերով 54 x 54 մ է: Բակը շուրջ 26 x 26 մ տարածք է, որի արևմտյան և հարավային կողմերով անցնում է 3 մ լայնությամբ երկհարկ կամարասրահը, որ առաստաղում թաղակապ է: Հյուսիսային կողմով հին շենքի առաջև անցկացվել է նույնպես 3 մ լայնությամբ հովանի, որ կազմում է երկրորդ հարկի կամարասրահի անմիջական շարունակությունը: Արևելյան թևը կամարասրահ չունի, այն միասնական ծավալով երկհարկ ուսումնական ու վարչական տարածք է, որ իր շարունակությունը ունի նաև հարավային կողմի առաջին հարկում: Տվյալ տարածաքում կան 6 լսարան, 3 վարչական սենյակ, դահլիճ, թեյարան, տնտեսական մաս: Շենքի բակի այս հատվածը երկու հարկերով էլ ապակեպատ է: Շենքի մնացյալ տարածքներում ընդգրկված են՝ 30 մեկսենյականոց և 8 երկուսենյականոց բնակարաններ, որոնք տեղաբաշխված են խմբավորված կարգով: Յուրաքանչյուր խմբում ընդգրկված են 4 բնակարան և մուտքային սպասասրահ:

Շենքը իր հորինվածքով աստվածաբանական դպրոցի ընդունված լուծում է, անկյունային մասերում (բացի հյուսիս-արևմտյանից) եռահարկ աշտարակներ են, որոնք ճակատներում լուծված են երեքնուկատիպ դասավորությամբ բացվածքներով: Արևելյան ճակատի կենտրոնական մասում երկհարկ շքամուտքն է, նրա երկու կողմերում երկհարկ դասավորված են 6-ական լուսամուտ: Դեպի բակը տանող աղեղնաձև բացվածքով մի անցուղի գտնվում է նախորդի հյուսիսային կողմում եղած աշտարակի ստորին հարկում: Շենքի հարավային ճակատում կան երկու ուղղանկյուն բացվածքով մուտքեր, մեկը՝ կենտրոնական հատվածներում, իսկ մյուսը՝ հարավ-արևմտյան աստիճանավանդակի հարակցությամբ: Մնացյալ բացվածքները զույգ լուսամուտների շարք են, որոնք վերևից ունեն աղեղնաձև երեսակալներ: Գարեգին Ա կրթական կենտրոնը ռադիկալ էկլեկտիզմի և որոշ հատվածներում մոդեռնիստական լուծումներով համադրված ամբողջություն է:

Միաբանական համակառույցը կամ վանկան կացարանները. Ռացիոնալ և վարպետ ըմբռնողությամբ կատարված հավելում է Մայր Աթոռի ընդհանուր կառուցվածքում: Այն ոչ միայն միոճությամբ լրացնում է Մայր Աթոռի գլխավոր հատակագիծը, այլ նաև ծավալատարածական միաշնչությամբ է արարված՝ միաբանական, Ղազարապատի, նախկին մկրտարանի, Հին Վեհարանի ու այլ շենքերի հետ, որոնք ձգվում են Մայր

Տաճարի բակի հարավային եւ արեւմտյան կողմերով: Միաբանական կացարանների հավելմամբ Մայր Տաճարի հարավային կառուցապատումը վերածվեց չորս բակերով կազմված համակառույցի, որ տարբեր կողմերում ունի զանազան թաղակապ անցումներ: Կացարանները իրար են կապվել բակերի պարագծով ձգվող 3 մ լայնությամբ երկար միջանցքներով: Կացարանների կիսնկուղային հարկերը հատկացվել են սննդի եւ այլ օժանդակ տարածքների համար: Միաբանական կացարանները հատակագծում հինգ նմանատիպ ուղղանկյուն՝ 12x36 մ չափերի շենքեր են, որոնք անկյունային հատվածներում համապատասխան լուծումով միացվել են իրար: Կացարանների հարավային ճակատի երկարությունը 150 մ է, իսկ կողային յուրաքանչյուր մասում՝ շուրջ 50 մ: Ամեն մի մասնաշենք լուծված է սիմետրիկ: Բակի կողմից կենտրոնական տեղադրությամբ մուտքի առաջ ասպիճանավանդակն է, որի երկու կողմերում երկարող 2 մ լայնությամբ միջանցքները հարկը բաժանում են արտաքին 6 մ լայնությամբ մեկ սենյականոց բնակարանների: Շենքի անկյունային հատվածներում երկու հարկերում էլ կան ընդհանուր ընդունարաններ: Շենքը առհասարակ երկաթբետոնյա կարկաս է, որ արտաքինից երեսպատվել է կարմիր քարով: Հատակը մարմարակերտ է: Բնակարանները հարմարավետ են եւ լավ կահավորված: Շենքը ամբողջությամբ լուծվել է հարթ տանիքով: Շենքի արտահայտչականությանը բնորոշ է երկրաչափական լակոնիկությունը: Այն տարածական մետրիկ բաժանումներով ստեղծված զուսպ կերպար ունի:

3.Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վարչահասարակական շենքերը.



Նոր դիվանատան շենքը. Կառուցվել է 2005-2006 թթ., ճարտարապետներն են՝ Ն. Ավագյանը եւ Արթուր Փափազյանը: Մեկենասն են նյույորքահայ հայտնի բարերար Նազար Նազարյանն ու ընտանիքը: Շենքը տեղադրված է Վեհարանի հյուսիսարեւմտյան կողմում, որպես նրա վարչական մասը: Այն Վեհարանի ու Ալեք եւ Մարի Մանուկյան գանձատան շենքերի հետ կազմում է Վեհարանի բակի արեւմտյան պարագիծը, անսամբլային համահունչության մեջ լինելով նրանց հետ: Վեհարանի բակի հյուսիս-հարավ առանցքային անցուղու հյուսիսային վերջավորության վրա սալահատակված ճանապարհը արեւմտյան կողմով մոտենում է դեպի դիվանատան առաջնամասում եղած չորս սյունանի թաղակապ մուտքը: Կառույցը երկհարկ է, ունի նկուղային հարկ եւ ձեղնահարկ: Շենքի երկարությունը 46.6 մ է, լայնությունը՝ 22.4 մ, երկու հարկերի բարձրությունը միասնաբար կազմում է 11 մ: Շենքի ծավալատարածական-հատակագծային լուծումը դասական սխեմայով է, կենտրոնական եւ կողային զուգահեռ առանցքներով դասավորված սեկցիաներ, որոնք իրար են միացվել փոխուղղահայաց առանցքի երկարությամբ ձգվող միջանցքի երկու կողմերում դասավորված սենյակներով: Արեւելյան եւ արեւմտյան ճ՝ակատների կենտրոնական հատվածն ու կողային ճակատները վերին մասում լուծված են սիմետրիկ ճակտոններով: Առաջին հարկում կենտրոնական սեկցիան կազմված է նախասրահից եւ եռամարշ գրանիտյա աստիճանավանդակից: Դրանց միջեւ երկարող 2.8 մ լայնությամբ միջանցքի երկու կողմերում լուսավոր գրասենյակներ են: Շենքի արեւմտյան կեսի կողային սեկցիաները առաջնայինների նկատմամբ շեղված են դեպի ներս: Դրանցում ընդգրկված են երկրորդական աստիճանավանդակներն ու սանհանգույցները, ինչպես նաեւ՝ հարավային կողմում մի վերելակ: Երկրորդ հարկը կրկնելով ներկայացված հորինվածքը, նախասրահի եւ մուտքային հանգույցի վրա լուծված է որպես ընդունարան-ժողովասենյակ: Ձեղնահարկն ու տանիքը ունեն համապատասխան լանջավոր դասական լուծում: Նկուղային հարկը հատկացված է պահեստների, արխիվների եւ ինժեներական սարքավորումների համար, ընդ որում նկուղի հարավային կողմում կա մի սրահ եւ դեպի Վեհարան տանող գետնուղի:

Դիվանատան արեւելյան եւ արեւմտյան ճակատները հորինվածքային նույն տեկտոնիկան եւ կերպարը ունենալով հանդերձ, առաջադրում են երկու մակարդակների վրա մետրական դասավորությամբ կամարակապ բացվածքների տարբեր համադրություններ: Ընդ որում կենտրոնական սեկցիայի սիմետրիայի առանցքի վրա գտնվող բացվածքները լայնությամբ ընդգծված են եւ արտաքին պարագծով մի անգամ եւս կամարակալված են երկհարկ քիվային գոտիով: Ճակատների ուրվագծային, հարթության մշակման եւ այլ արտահայտչամիջոցները հետեւում են հայկական միջնադարյան ճարտարապետության մոտիվներին: Շենքը ամբողջությամբ երեսապատված է Հոկտեմբերյանի կարմիր տուֆով: Շենքի ստորին երեք տողերը շարված են կապույտ բազալտից: Շենքը կառուցված է շինարարական բծախնդրությամբ:

Վաչե եւ Թամար Մանուկյանների անվան Մատենադարանի համակառույցը.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարածքում վաղուց անհրաժեշտություն կար կառուցելու ժամանակակից պահանջներին համապատասխանող գրադարան-մատենադարան: Մայր Աթոռի պատմական գրադարանի ժառանգությունը խորհրդային տարիներին տեղափոխվելով Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրերի ուսումնասիրության

ինստիտուտ, Էջմիածնում մատենադարանի դերը նվազեց: Դարասկզբին՝ 1910 թ. Էջմիածնում ճարտարապետ Ջոհրապյանի նախագծով կառուցված մատենադարանը հարկացվեց տարբեր նպատակների: Սակայն հարյուր տարվա ընթացքում կուտակված հին և նոր գրադարանային հարստությունը, Էջմիածնում առաջնահերթ լուծում էին պահանջում: Գարեգին Բ Կաթողիկոսը անհապաղ ձեռնարկեց նոր մատենադարանի կառուցումը:

Նոր մատենադարանի կառուցման մեկենասն է լոնդոնաբնակ հայտնի բարերար Վաչե



Մանուկյանը: Ճարտարապետն է Արտակ Ղուլյանը: Նախատեսվում է շենքը ավարտել ընթացիկ տարում: Մատենադարանը տեղադրված է երբեմնի ասպդադիտարանի շենքի տեղում, Բաց խորանի հրապարակի հարավային կողմում: Այն մտահղացմամբ և կերպարով հորինվածքային անմիջական կապի մեջ է շրջակա շենքերի հետ:

Համակառույցը երկու ծավալային ակցենտների միջև ձգվող կամարակապ հորինվածք է, որի կենտրոնը հինգ երկար ապիճաններով կազմված պատվանդանի վրա բարձրացած կամարասրահն ու իր առջևի հրապարակն է, որ ընդգրկում է ճեմուղիներով համադրված ջրային ու կանաչապատ մակերեսներ: Հիերարխիան շենքի արևմտյան և արևելյան վերջավորություններում եղած երդիկավոր սրահներն են: Շենքի առանցքային համակարգը միահյուսում է՝ արևելք-արևմուտք ուղղվածությամբ երկարավուն կամարակապ ծավալն ու նրան փոխուղղահայաց մուտքային ու ընթերցասրահային թևերը:

Նոր մատենադարանի հատակագծային լուծումը անկյունաձև դասավորություն ունի: Երկար կողմը արևելք-արևմուտք ուղղվածությամբ է, իսկ կարճը՝ հյուսիս-հարավ: Մատենադարանի հիմնական մուտքը հյուսիս արևմտյան կողմում է: Մի այլ՝ երկրորդական մուտք տեղաբաշխված է շենքի արևելյան նեղ ճակատի կողմում: Այստեղից ոչ հեռու՝

հյուսիսային ճակատի արեւելյան վերջավորության վրա է նկուղային՝ գրապահոցների հարուկ մուտքը: Ամեն մի հարկ սիմետրիայի առանցքով անցնող միջանցքի միջոցով բաժանվում է հարավային եւ հյուսիսային սենյակաշարքերի, որոնց սկզբում եւ վերջում դահլիճների խմբերն են, ինչպես նաեւ նրանց հարակից ասպիճանավանդակները եւ վերելակները:

Նկուղային հարկը օգտագործելի է արեւելյան կեսի սահմաններում, մյուս կողմում այն դեռեւս չի իրացվել: Նկուղում տեղադրված են օժանդակ տարածքները եւ ըստ երեւույթին գրապահոցները: Առաջին հարկը կազմված է մուտքային սրահից, նրա արեւմտյան կողմում տեղաբաշխված դահլիճից եւ դեպի արեւելք երկարող միջանցքի երկու կողմերում դասավորված գրադարանային մասնագիտացված սենյակներից, որոնք ավարտվում են գլխավոր ընթերցասրահներով: Այնպես է ստացվում, որ շենքը ունի արտաքին եւ ներքին միջանցքներ: Արտաքին միջանցքը կամարասրահի երեւով անցնող երկհարկ բարձրությամբ երկար սրահետ է, որ ի տարբերություն ներքին միջանցքների, դրսից միանգամայն կապ է հաստատում մուտքային եւ ընթերցողական դահլիճների խմբերի միջեւ:

Մատենադարանի նախասրահը հանդիսավոր եռամարշ ասպիճանավանդակ է: Սրահի կենտրոնում 4 սյուներով լուսավոր բարձր տարածություն է՝ լայնությունը 8.4 մ է եւ խորությունը կամ հյուսիս-հարավ ուղղությամբ չափը 14 մ: Կոնֆերանսի 120 տեղանոց դահլիճը ըստ էության բաղկացած է երկու հարակից մասերից: Դահլիճից եւ կողային երկհարկ օժանդակ կամարակապ սրահից: Դահլիճը միասնական երկհարկ բարձրությամբ լուսավոր թաղակապ սրահ է, որ շուրջ 9 մ թռիչքով եւ 16 մ խորությամբ կրկնում է նախասրահի համաչափությունը եւ վերջում ունի 7.9x3.5 մ չափերով պարզագույն բեմ: Փաստորեն այն 2.8 մ չափով դուրս է ցցված շենքի հարավային ճակատից: Կողային օժանդակ սրահները կամարակապ բացվում են դեպի դահլիճը, որոնց սյունային հենարանները միաժամանակ դահլիճի թաղակապի կրող մույթերն են:

Մուտքային սրահից արեւելք ընթացող միջանցքի լայնությունը 2.4 մ է, սենյակների խորությունը՝ 5.4 մ: Սենյակների արեւելյան վերջավորության հարավային կեսում տեղաբաշխված է գրքերի սպասարկման մասը, որ համապատասխանաբար ունի բեռնատար հարթակ: Մատենադարանի արեւելյան թեւը վերեւում նշված սենյակների հետ կապվում է ասպիճանավանդակի առջեւով անցնող միջանցքով, որտեղ առաջին եւ երկրորդ հարկերում տեղադրված են խաչաձեւ դահլիճներ: Նրանք առաջին հարկում ընթերցասրահներ են, իսկ երկրորդում՝ հետաքրքիր ներսույթով երդիկավոր ցուցասրահներ: Հարավային խաչաձեւ դահլիճները 10.2x14.4 մ չափերով են, իսկ հյուսիսայինները՝18.5x11.10 մ: Առաջին կամ հարավային խաչաձեւ սրահները երկու հարկերի մակարդակներով անմիջապես բացվում են ներքին միջանցքի արեւելյան վերջավորության վրա: Դրանց խաչաթեւերը արեւելք-արեւմուտք ուղղվածություն ունեն: Խաչաթեւերի արեւմտյան կողմի անմիջական շարունակությունն են կազմում ներքին միջանցքի հարավային սենյակները, որոնք երկրորդ հարկում տվյալ ընթերցասրահի բաղկացուցիչ մասն են կազմում: Երկրորդ կամ հյուսիսային խաչաձեւ սրահները առաջադրում են մի այլ դասավորություն: Այստեղ արեւելյան կողմում եղած կենտրոնական 4 սյուներ իրենց վրա են կրում կենտրոնական քառակուսին, որ երկրորդ հարկում պսակված է լուսավոր երդիկով: Խաչաձեւ դահլիճի

թևերը հյուսիս-հարավ ուղղվածությամբ են և իրենց հարավային շարունակության վրա ունեն երկրորդական նախասրահ: Սա արևմտյան կողմից անմիջապես բացվում է դեպի վերևում նշված արտաքին կամարասրահը, իսկ արևելյան կողմում վերջավորվում է աստիճանավանդակով:

Վաչե և Թամար Մանուկյան մատենադարանը ճակատային հորինվածքի համանվագ է: Այն արտակարգ զգացական տակտով իրականցված մակերեսների համադրություն ունի: Փաստորեն հյուսիսային և հարավային ճակատների ենթատեքստը տարբերվելով հանդերձ, դրանք իրար հետ կերպարային միաշնչության մեջ են: Հյուսիսային ճակատի ենթատեքստը կամարասրահային մետրական շարքն է, որ արևելյան և արևմտյան կողմերից ունի հորինվածքային նուրբ մասնահատումներով իրականացված սկիզբ և ավարտ: Դրանցից մուտքային սրահի ճակատային հատվածը ուշագրավ է խաչելության քանդակազարդ մշակումով, մինչդեռ ընթերցասրահ և ցուցասրահի ճակատային առանցքը կազմված է՝ ապակեպատ ութանիստ երդիկի տակ սիմետրիկ դասավորված եռակի լուսամուտներով ու կողային որմնախորշերով: Շենքի ճակատային լուծումներում չափազանց շահեկան օգտագործվել է որմնախորշը, որ սիմետրիայի առանցքով ունի քանդակային միջամտություններ: Տվյալ դեպալի պարբերակային կրկնությամբ մշակվել են շենքի հարավային ճակատով անցնող որմնախորշերը: Մատենադարանի ճարտարապետությունը ոճականորեն պատմական արտահայտչապաշտություն է կամ ազգային ժառանգորդությամբ բնութագրվող ռոմանտիզմ: Առանձնապես հաջողված պետք է համարել շենքի բացվածքների, դեկորատիվ տարրերի, այդ թվում և զարդամշակումների հորինվածքային կերտվածքը, որ գեղարվեստականորեն հարստացնում է համակառույցի կերպարը: Բովանդակ սենյակների կոմֆորտն ապահովող ծառայությունները հիմնականում համապեղված են առաստաղային մասերում, դրանք արդիական են և միանգամայն միաշունչ արտաքին լուծումների հետ:

Վեհարանի հանդիսությունների դահլիճը. Գտնվում է անմիջապես Վեհարանի



երևում, նրանից 19մ հեռու: Դահլիճի շինարարությունը սկսվել է 2011թ.: Ճարտարապետն է Հրաչյա Պողոսյանը, շինարարության ծախսերի մեկենասը՝ Տաշիր հաստատությունը հանձին ռուսաստանաբնակ Սամվել Կարապետյանի: Վեհարանին կից հանդիսությունների դահլիճ կառուցելու նպատակը Մայր Աթոռում միջազգային հանդիպումների ու կրոնական ժողովների կազմակերպումն է: Շենքը արտաքինից քարե երեսպատմամբ կարկասային համակարգ է: Այն եռահարկ է, կազմված՝ -3.3 նիշի վրա գտնվող նկուղային հարկից, 6.6 մ բարձրությամբ երկրորդ՝ փոքր դահլիճի հարկից, 9 մ բարձրությամբ երրորդ՝ հիմնական դահլիճի հարկից: Համակառույցը հյուսիսային և հարավային կողմերից ունի 3 մ բարձրությամբ և 3.75 մ լայնությամբ հինգ թռիչքանի կամարակապ ուղիներ, որոնք դուրս գալով Վեհարանի կենտրոնական մասի կողային հատվածներից ստեղծում են 13.3x19 մ չափերի գողտրիկ կանաչապատ բակ: Դահլիճային մասնաշենքը 8x6 կարկասային ցանցով խորանարդաձև ծավալ է, որ բոլոր կողմերից ունի արտաքին կամարասրահ: Շենքի միջսյունային հեռավորությունը՝ 3.75 մ է: Հանդիսությունների դահլիճի ընդհանուր չափերը կազմում են՝ հյուսիսից հարավ 30 մ, արևելքից արևմուտք 23 մ: Համակառույցի հորինվածքի կենտրոնը՝ Վեհարանի և դահլիճի միջև ծավալվող բակն է: Հիերարխիան դահլիճների խոՐանարդաձև ծավալն է, որ ավելի փոքր է քան Վեհարանը: Շենքի առանցքը Վեհարանի արևելք-արևմուտք գլխավոր առանցքի շարունակությունն է:

Վեհարանի հանդիսությունների մասնաշենքը բոլոր հարկերում լուծվել է որպես սյունասրահներ, որոնք արևմտյան վերջավորության վրա ունեն ուղղահայաց կապ ծառայող կողային ծավալներ, իրենց օժանդակ մակերեսներով:

Նկուղային հարկը կազմված է հյուսիս-հարավ առանցքով անցնող միջանցքի երկու կողմերում դասավորված պահեստներից և դրանց ծայրային մասերում տեղադրված օդափոխության սենյակներից: Այստեղ կողային ծավալների արևմտյան անկյունները զբաղեցնում են աստիճանավանդակն ու վերելակները, ինչպես նաև տեխնիկական սենյակները: Առաջին հարկում տեղադրված 6.6 մ բարձրությամբ դահլիճի կողային ծավալները երկհարկ են: Դրանք բովանդակում են աստիճանավանդակն ու վերելակները, անձնակազմի սենյակները, օդափոխության, սանհանգույցի մակերեսները, ինչպես նաև դահլիճի կողմից օժտված են նախամուտքերով: Փոքր դահլիճի միջսյունային հեռավորությունը արևելյան կողմում 7.5 մ է, իսկ արևմտյանում՝ 3.75 մ: Վերին կամ հիմնական դահլիճը հատկացված է հանդիսավոր ընդունելությունների համար: Այն 50 սմ բարձրությամբ աստիճանաձև պատվանդանի վրա բարձրացված 34x20 մ տարածություն է, որ հետին կողմում ունի ևս 5 աստիճանների չափով բարձրացված բեմ: Բեմի երկու կողմերում ութանիստ բնով սյուներ են, որոնք իրենց վրա կրում են վարագույրի ֆերման: Դահլիճը առաջնային և կողային կողմերում ունի երեքական ասպղաձև սյուներ, որոնք հեռանկարային հետաքրքրություն են հաղորդում մինչև աստիճանները ծավալվող պարագծային տարածությանը: Ինչպես փոքր դահլիճում՝ այստեղ նույնպես բեմական մասի երկու կողմերում կան կողային ծավալներ, որոնք բովանդակում են աստիճանավանդակն ու վերելակները, ինչպես նաև բեմական զրպաններ հիշեցնող օժանդակ մի քանի սենյակներ: Հանդիսությունների մասնաշենքի տանիքը քառալանջ է, որ նստում է 3 մ բարձրությամբ փոխադարձաբար խաչվող ֆերմաների վրա: Շենքի արտահայտչականությունն ու

դեպալները հայկական վանական համալիրների հետևողությամբ են: Ինչպես հավաստվում է հանդիսությունների դահլիճի բացատրագրում՝ շենքը երեսպատվելու է Վեհարանի նույն տուֆ քարով: Համակառույցում օգտագործված սյուները հիմնականում գլանաձև են, համապատասխան եռամաս խոյակներով և պատվանդաններով:

Պատշգամների ճաղերն ու շենքի սալահատակները նույնպես նախատեսվում են բազալտից: Դահլիճները ներսի կողմից երեսապատվելու են գորշ գույնի քարով: Սենյակների միջնորմները նախատեսվում է ծածկել կիպսոկարտոնով: Ասփիճաններն ու ասփիճանավանդակը ամբողջությամբ երեսպետվելու են մարմարով, իսկ բազրիքները իրականացվելու են կաղնու փայտից, որոնք իրար կմիանան ապակյա շիթերով:

Էօրնեկյան վարժարանի շենքը. Մայր Աթոռի կրթական նշանակությունն ու դերը բարձրացնող մի նոր հաստատություն է Էօրնեկյան վարժարանը: Փաստորեն սա Ս. Էջմիածնի տարածքի 4-րդ ուսումնական շենքն է: Գարեգին Բ Վեհափառի նախաձեռնությամբ Գևորգյան ճեմարան բարձրագույն հոգևոր հաստատության և Վազգենյան դպրանոցի կողքին վերջին տասնամյակում ավելացան Գարեգին Ա կրթական կենտրոնը, Էջմիածնի հայորդյաց տունն ու Էօրնեկյան վարժարանը: Էօրնեկյան վարժարանը կապող օղակ է Ս. Գայանեի և Մայր Աթոռի միջև, որ հատկացվելու է 500-700 աշակերտով տասներկուամյա ընդհանուր կրթության նպատակներերին: Էօրնեկյան վարժարանը նախատեսվում է տեղադրել Էջմիածնի Հայորդյաց տան հարակից տարածքում, Իսի-լե-Մուլինո փողոցի առանցքին զուգահեռ: Նախագծում, այն տաք անցումով կապվել է հայորդյաց տան հանդիսությունների դահլիճի և մարզասրահի հետ: Էօրնեկյան վարժարանը բաղակացած է նախասրահի երկու կողմերում տեղաբաշխված երեք մասնաշենքերից, որոնք հարկայնությամբ իրարից տարբեր են: Նախասրահի մուտքերը հյուսիսային և հարավային կողմերից են: Մուտքային դահլիճը խաչաձև է՝ կենտրոնում երկու սյուներով, տարածքի հյուսիսային կողմի երկու անկյուններում տեղադրված են ասփիճանավանդակները, իսկ հարավային կողմում՝ պահակասենյակները: Նախասրահի մասնաշենքը եռահարկ է, ընդորում նրա արևելյան և արևմտյան կողմերի կենտրոններով անցնող 3 մ լայնությամբ միջանցքները տանում են դեպի լսարանային մասնաշենքերը: Արևելյան կողմի ծայրագույն մասնաշենքը միահարկ է: Այն 21x21 մ չափերով քառակուսի տարածք է, որ միջանցքից հյուսիս ունի 6x6 մ չափերի ռեկրեացիոն սրահ: Վերջինի շուրջ տեղաբաշխվել են 6 դասարան, սանհանգույց և այլ սենյակներ: Դեպի մուտքային սրահը՝ հաջորդ մասնաշենքը երկհարկ է: Այն 15x34.5 մ չափերով կառույց է, որ միջանցքային հորինվածք ունի՝ համապատասխան 7 դասարանով: Երրորդ մասնաշենքը 36x19.4 մ չափերով փոխուղղահայաց տեղադրությամբ գտնվում է նախասրահի արևելյան կողմում: Այն եռահարկ է և նույնպես լուծված է միջանցքի երկու կողմերում դասավորված դասարաններով: Մասնաշենքի երրորդ հարկում նախատեսվում են հավաքույթների դահլիճն ու դպրոցական գրադարանը: Դպրոցի ճարտարապետական արտահայտչամիջոցները միջինացնում են Գարեգին Ա կրթական կենտրոնի և հայորդյաց տան առանձնահատկությունները:

Արտադրական համակառույցը կամ ավտոտնտեսության, պահեստների և մոմի արտադրության մասնաշենքը. Գտնվում է միաբանական կացարանների հարավային կողմում՝ առանձին հողակտորի վրա, նախկին հիվանդանոցից կամ Գարեգին Ա կրթական

կենտրոնից արևելք: Շենքի ճարտարապետն է Անահիտ Թարխանյանը, կառուցվել է 2004 թ.: Կառույցը 72x79 մ չափերով միահարկ, երկբակ հորինվածք է, ներքին բարձրությունը 3.9 մ է, արտաքին բարձրությունը մինչև տանիքի գագաթը 6 մ: Համակառույցը, մեկ ամբողջություն լինելով, գործառնականորեն զատևորված է երկու բակերի շուրջ: Արևմտյան 11x 34.8 մ չափերով բակը արտադրական և պահեստների նշանակության է, իսկ արևելյանը 13x42 մ չափերով բակը ավտոտնտեսության համար: Երկու բակերի շուրջ 2 մ լայնությամբ պտտվող միջանցքներ են: Արևմտյան բակի 7.5 մ լայնությամբ մուտքերը տեղաբաշխված են կառույցի արևմտյան կողմի հյուսիսային և հարավային վերջավորություններում: Նույնը սիմետրիկ դասավորությամբ կրկնվել է արևելյան բակի արևելյան կողմի վրա:

Արևմտյան բակի շուրջ հյուսիսից հարավ տեղաբաշխվել են հետևյալ ենթատարածքները՝ սննդի, բարեգործական ապրանքների, եկեղեցական կտորների և իրերի պահեստները, ինչպես նաև դերձակատունը: Ընդորում վերջին երեքի մուտքերը նախատեսվել են ոչ թե բակից, այլ հյուսիսային ճակատից: Բակի արևելյան կողմում հաջորդաբար գտնվում են՝ գրքի, թղթի, շինարարական , տնտեսական, հումքի, պատրաստի արտադրանքի պահեստները: Փաստորեն երկու վերջին պահեստները մետաղի, փայտի ու մոմարտադրության արհեստանոցների հետ մեկ ամբողջություն են կազմում և ունեն առանձնացված մուտք բակի հարավ-արևելյան անկյունից: Բակի երկու մուտքերի միջև վարչական սենյակներն ու սանհանգույցն է: Արևելյան բակում ընդգրկվել են ավտոնորոգման, լվացման, պահեստամասերի տարածքներ, ինչպես նաև վարորդների ու անձնակազմի սենյակներն ու 10-ից ավելի ավտոհանգրվանները: Շենքի արևելյան ճակատի ծայրամասերում տեղաբաշխվել են դեպի բակ տանող մեքենաների երկու մուտքեր:

Արտադրական կառույցը տիպաբանական հետաքրքիր լուծում ունի: Նրա արտաքին երեսպատումը կատարվել է կարմիր տուֆով և ստորին մասերում կապտավուն բազալտով: Կառույցի ծածկի կոնստրուկցիաները մետաղական ֆերմաներ են, որոնք տեղադրված են առանձին կանգնած սյուների վրա: Պատերը ինքնակրող են և շարված են միդիս շարվածքով: Առաստաղները կախովի են: Շենքը հորինվածքային առումով պարզ լուծում ունի, այն ոճականորեն Ի դարի ռացիոնալիզմ է, պատմականության հատկանիշներ ունեցող բացվածքների շրջանակներով, որոնք թելադրվել են հարակից շինությունների հետ միաշնչություն պահելու հանգամանքներով:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ճարտարապետական միջավայրի տարածական կազմակերպումն ու օժանդակ կառույցները. Օրըստօրե Մայր Աթոռի տարածքը օպտիմացվում է և շենքերով և միջավայրի տարածական կազմակերպմամբ, որտեղ իր մեծ դերն ունի Գարեգին Բ Կաթողիկոսը: Բազմագբաղ լինելով՝ Վեհափառի ուշադրությունից չի վրիպում Մայր Աթոռի ոչ մի անկյուն և ոչ մի մանրամասն: Հատկապես տվյալ հանգամանքը նկատելի է Մայր Աթոռի միջավայրի գեղեցկացման հարցերում, որ կատարվում է ըստ անհրաժեշտության: Ընդորում, միջավայրի կազմակերպումը միայն կանաչապատումը և ինֆրաստրուկտուրալ հարստացման միջոցառումները չեն, այլ նաև քանդակային կոթողների հավելումը, որ Գարեգին Բ Հայրապետի գահակալության

շրջանում նշանավորվեց նախադեպը չունեցած Լուսավորչի Աջի իրականացմամբ եւ հատկապես Ներսիսյան լճի եւ նրա միջավայրի կազմակերպմամբ, մանկական խաղավայրի ստեղծմամբ եւ այլն:




Վանքապատկան մանկական խաղավայրը. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարեշինական քաղաքականության մեջ մեծ հնչեղություն ունեն մատաղ սերնդի դաստիարակությունն ու հովանավորությունը: Այդ փիպի միջոցառումներից է Մայր Աթոռի տարածքում մանկական խաղավայրի ստեղծումը: Ծրագրի գլխավոր հատակագծի մշակման ճարտարապետն է Մարիամ Մովսիսյանը, խաղալիքների իրականացումը կատարել է «Նոնգամ» ընկերությունը: Մայր Աթոռում իրականացված խաղահրապարակը ուշագրավ է իր մեծությամբ եւ անպառապատ գեղատեսիլ վայրով: Այն Ներսիսյան պուրակի բաղկացուցիչ մասն է եւ զբաղեցնում է Վեհարանի բակի արեւմտյան կողմում գտնվող 1300x1500 մ ուղղանկյուն հողատարածքը: Երկու փոխուղղահայաց հետիոտն ճանապարհներ իրար հետ հատվելով տարածքը բաժանում են հյուսիսարեւմտյան եւ հարավարեւելյան անկյունագծային դասավորությամբ խաղահրապարակների: Ստեղծված չորս հողատարածքները իրար են միացվել հրապարակամման տարածության միջոցով, որ միաժամանակ մանկական պարզագույն բացօթյա թատրոն է: Այն արեւմտյան կողմում ունի բեմական մասի նման առաջնամասով մի վարչական շենք: Տեղում կազմակերպված են հետիոտն ճեմուղիներ, սանհանգույց, բացօթյա սրճարան: Տարածքը ամբողջապես ունի մանկական խաղերի էլեկտրամատակարարում եւ այլ անհրաժեշտ հարմարություններ: Ընդգրկված խաղերը խմբակային բնույթ ունեն, որոնց մոնտաժումը կատարվել է էլեկտրամեխանիկական հատուկ նախագծերով: Առանձնապես ուշագրավ է խաղերի տարածական եւ պատմողական մթնոլորտը, բաղկացուցիչ տարրերի մանկական երփներանգությունը, առինքնող համաչափությունները, սալահատակի եւ կանաչապատ

պուրակների փոխդասավորությունը: Իրոք որ Մայր Աթոռի մանկական խաղերի գույնի միշտ հիշվող հեքիաթների շարք է:

Ճարտարապետական փոքր ձևեր. Մայր Աթոռի տարածական կազմակերպումը ի սկզբանե մտահղացվել է որպես թանգարան բաց երկնքի տակ, որտեղ ներգարվվել են բազմաթիվ ճարտարապետական փոքր ձևեր: Գարեգին Բ Վեհափառի գահակալության տարիներին իրականացված նման գործերից են բռնադատված հոգևորականների մոնումենտալ կոթողը, որ ներկայացվել է Գևորգյան հոգևոր ճեմարանի կազմում: Քանդակներից առանձնապես ուշագրավ են հետևյալները:

Հուշակոթողը գտնվում է Վեհարանի հարավարևելյան կողմում եղած կանաչ հողակտորի վրա: Այն կազմված է դարչնագույն քարից իրականացված ուղղահայաց կոթողից և կապտավուն հորիզոնական տեղադրությամբ պատվանդանից, որ կրում է հետևյալ արձանագրությունը՝

ԱԼԵՔ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՅԿԵԱՆՍ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ
ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐ ԱԶԳԻՍ Ի ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Կոթողը խորհրդանշական բովանդակություն ունի: Այն կողային տեղադրությամբ երկու թագակիր արծվաքանդակների միջև պահվող կենաց ծառ-խաչ է, որ բոլոր կողմերից ամրացված է հավերժության վարդակներով: Հուշակոթողը 3 մ բարձրությամբ է և 2 մ լայնությամբ ուղղակյունաձև հարթաքանդակ է: Նախագծել է ճարտարապետ Արտակ Ղուլյանը, իրականացումը պատկանում է է Հորիզոն-95 ՍՊԸ-ին:

բ. Վազգեն Ա Հայրապետի քանդակը Մայր Աթոռի հարակից այգում. Երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի՝ հետաքրքիր մասշտաբով մտահղացված քանդակը ընդամենը 2.6 մ բարձրություն ունի: Այն պատվանդանի հետ կազմում է 3.35 մ: Քանդակի լայնությունը 95 սմ է: Փաստորեն քանդակը բնական մասշտաբից մի փոքր մեծ է և չափերով չի չափազանցվել՝ արտացոլելով բարի և գործունյա Կաթողիկոսի կերպարը: Կոթողը բստ էության ակնածանք է մեծ Հայրապետին և Հայ Եկեղցուն: Քանդակի պատվիրատուն նշանավոր քաղաքական գործիչ և հայ ժողովրդի մեծ բարեկամ Ռուսաստանի վարչապետի պաշտոնը վարած Նիկոլայ Ռիժկովն է: Քանդակագործը ռուսաստանահայ Ֆ. Ս. Սողոյանն է, իսկ պատվանդանի հեղինակը՝ Ա. Նազարեթյանը: Քանդակը տեղադրված է Ս. Էջմիածնի հարակից զբոսայգում՝ կանաչապատ տարածության մայթամերձ մասում: Գեղեցիկ է պատվանդանի մտահղացումը, որ կազմված է երկու մասերից՝ սալահատակից և պատվանդանից: Վերջինը սալահատակի կենտրոնում տեղադրված 150 սմ կողմով և 45 սմ բարձրությամբ գրանիտյա խորանարդ է: Սալահատակը ընդամենը 20 սմ բարձրություն ունի, որ անկյունային հատվածներում 75 սմ քառակուսու չափով իջեցրած է: Այնպես է ստացվում, որ պատվանդանը 3 մ կողմով քառակուսի է՝ կենտրոնական մասը խաչաձև կերտվածքով: Պատվանդանի հյուսիս և հարավարևելյան քառակուսիների վրա հայերեն և ռուսերեն լեզուներով փորագրված է՝

## ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԵԾ ԲԱՐԵԿԱՄԻՆ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐՈՎ

գ. Այլ իրականացումներ՝ «Լուսավորչի աջը» հուշակոթողը. Գարեգին Բ Վեհափառի օրոք իրականացված աննախադեպ հուշակոթող է «Լուսավորչի աջ» -ը: Զափազանց զուսպ պատվանդանով և ձևերով կոթողը տեղադրված է Երևանից դեպի Էջմիածին մուտք գործող մայրուղու ճամփաբաժանում, որ մի կողմից ընթանում է դեպի Արմավիր և մյուսով դեպի Ս. Հռիփսիմե տաճարն ու վանքամերձ Կոմիտասի հրապարակը: Քարի վրա կերտված ոլորապտույտ, նուրբ հյուսվածքի խորքով պատկերազարդ ներկայացվել է հայոց պատմության մեջ քրիստոնեության մուտքի դերը, նրա բարեխիրական և դարակերտ նշանակությունը: Քանդակի հեղինակն է անվանի նկարիչ Հակոբ Հակոբյանը: «Լուսավորչի աջը», կանոնավոր ձևի հաջորդական ծավալներով համադրված պատվանդանով, համաչափությունների մի երաժշտություն է, որ ժամանող այցելուներին ավետում է մոտալուտ քրիստոնեության կենտրոնի՝ Ս. Էջմիածնի մասին: Պարելեֆային կոմպոզիցիան կազմված է հայ ժողովրդի համար խորհրդանշական բառերից՝ ՀԱՅՐ ԱՍՏՎԱԾ-ՈՐԴԻ ԱՍՏՎԱԾ-ՍԲ ՀՈԳԻ, ՀԱՎԱՏՔ-ՀՈՒՅՍ-ՍԵՐ, ՆՈՅԱՆ ՏԱՊԱՆ-ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ-ՈՒՐԱՐՏՈՒ-ՀԱՅԱՍՏԱՆ և այլն: Կոթողը ամբողջությամբ ճարտարապետության, քանդակի և նկարչության վարպետ համադրություն է: Պատվանդանի հեղինակն է ճարտարապետ Գրիգոր Նալբանդյանը:

* * *

Գարեգին Բ Վեհափառի գահակալության տարիներին Մայր Աթոռը՝ Տաճարային բակ-Վեհարան և օժանդակ շենքերով համակառույցից վերափոխվեց երեք տաճարներով համադրված հինգ մասնագիտացված գոտիներով համալիրի: Մի հանգամանք, որ տարածական կազմակերպման նոր որակ ստեղծեց և փիլիսոփայական առումով հարուստ բովանդակություն: Եկեղեցական ճարտարապետությունը իր տեսակներով երանգավորվեց ստեղծագործական որոնումներով: Մայր Տաճարի և Ս. Գայանե եկեղեցու կողքին կառուցված Ս. Տրդատ Բաց խորանը, Ս. Վարդան և Հովհաննես Մկրտիչ Մկրտարանը և Հրեշտակապետաց ուսումնական և մեմորիալ եկեղեցին նոր որակ դրսևորեցին ոչ միայն Մայր Աթոռի տարածքում, այլև՝ հայկական ճարտարապետության մեջ ընդհանրապես: Դրանք նոր երանգ ավելացրեցին հայկական ճարտարապետության ճանաչողությանը միջազգային ասպարեզում: Կառուցված հոգևոր շենքերը՝ դիվանատունը, միաբանական կացարանը, Վաչե և Թամար Մանուկյանների անվան մատենադարանը, ստեղծագործաբար շարունակեցին Բաղդասար Արզումանյանի կողմից իրականացված կառույցների ոճական առանձնահատկությունները և Մայր Աթոռի տարածքում ստեղծեցին ճարտարապետության ինքնատիպ դպրոց: Նշված շենքերը և՛ հայկական ազգային տոհմիկ նկարագիր ունեն, և՛ արդիական են: Նույն ձևով կարելի է բնութագրել Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախաձեռնությամբ կառուցված կամ վերակառուցված

ուսումնական հաստատությունների ճարտարապետությունը, ինչպիսիք են՝ Գևորգյան ճեմարանի զարգացումը աստվածաբանական համալսարանի, Գարեգին Ա կրթական կենտրոնը, Էօրնեկյան դպրոցը, Հայորդյաց տունը: Նշվածների հետ ավտոտնտեսության ու պահեստների շենքը, Փրանսիական դարմանատունը, ինչպես նաև Գևորգյան ճեմարանի դահլիճների մասնաշենքը, հարկայնությամբ և մասշտաբով ու ծավալատարածական ձևերով միասնական խորք ստեղծեցին եկեղեցական շենքերի համար: Ինչ վերաբերում է միջավայրի կազմակերպման խնդիրներին, պետք է ընդգծել, որ տվյալ շրջանում միջավայրի կանաչապատման զարգացումները կատարվեցին միաշունչ և Մայր Աթոռի տարածքը վերածեցին բացօթյա թանգարանի: Ճարտարապետական փոքր ձևերը Գարեգին Բ Կաթողիկոսի շինարարական գործունեությունում նոր մասշտաբ ստացան: Եթե Ալեք և Մարի Մանուկյանների հուշակոթողը շարունակում է նախկինում եղած հուշարձանների ոճական առանձնահատկությունները, ապա «Գրիգոր Լուսավորչի աջի» քանդակային կոթողը ժամանակակից արվեստի և քանդակի նորարար լուծում է, «Բռնադատված կրոնավորների» հուշակոթողը միջավայրային ճարտարապետության անկրկնելի օրինակ է: Ս. Գրիգոր Լուսավորչի դարպասը կարելի է համարել տարածական ճարտարապետության և քանդակի սինթեզի միջազգային լավագույն նմուշներից մեկը: Մանկական խաղավայրի հավելումը Մայր Աթոռի կազմում միանգամայն պերճանքի զգացմունքով է և Գարեգին Բ Հայրապետի մարդասիրական մեծ կարողությունների մեկնաբանը: